ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆԻ ՊԱՊԻԿՅԱՆԻ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ ԴԱՎԹՅԱՆԻ ՎՐԱՍՏԱՆ (Ք. ԹԲԻԼԻՍԻ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

Անի Պապիկյան,

Ռաֆայել Դավթյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության գլխավոր մասնագետ,

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգչային ցանցերի ադմինիստրատոր:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Վրաստան (ք.Թբիլիսի), 2022թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 1-ը:

4. **Հրավիրող կողմը.**

«Թեքվեյ» ընկերություն:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն «Տարածաշրջանային կիբեռանվտանգություն, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նորարարություն» (GITI-2022) միջոցառմանը:

6. **Քննարկված թեմաները.**

«Տարածաշրջանային կիբեռանվտանգություն, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նորարարություն» (GITI-2022) միջոցառումը վերաբերում էր ՏՀՏ զարգացմանը, էլեկտրոնային կառավարման զարգացմանը, բիզնես գործընթացների վերլուծությանը, կիբեռանվտանգությանը: Միջոցառման ընթացքում ներկայացվել են թվային փոխակերպման, թվային կառավարման, հանրային թվային ծառայությունների, էկոհամակարգերի զարգացման վերաբերյալ շնորհանդեսներ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միջոցառմանը ողջույնի և բացման խոսքով հանդես եկան Վրաստանի ՏՀՏ բիզնես խորհրդի նախագահը, Վրաստանի արդարադատության, էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարները, ՏՏ ընկերությունների ղեկավարներ:

Միջոցառմանը մասնակցում էին Վրաստանի, Հայաստանի, Ուկրաինայի, Իսրայելի, Լիտվայի, ԱՄԷ և Հունաստանի ներկայացուցիչները:

2022թ. դեկտեմբերի 1-ին միջոցառման առաջին հատվածում «Էլեկտրոնային կառավարման զարգացում, տարածաշրջանային ձեռքբերումներ և ապագայի ծրագրեր» խորագրի շրջանակում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության գլխավոր մասնագետ Անի Պապիկյանը ներկայացրեց «Թվային փոխակերպումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ շնորհանդեսը:

Միջոցառման երկրորդ և երրորդ հատվածներում մյուս մասնակիցները ներկայացրին շնորհանդեսներ «Բիզնես գործընթացների և ընթացակարգերի պարզեցման արժեքը, լավագույն դեպքերը տարածաշրջանում» խորագրի շրջանակում:

Միջոցառումը շարունակվել է նաև դեկտեմբերի 2-ին: Կայացել է GITI-2022 «Տարածաշրջանային կիբեռանվտանգություն, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների նորարարություն» (GITI-2022) մրցանակաբաշխության արարողությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջոցառումը կրում է շարունակական բնույթ: Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ մասնակցել հաջորդ միջոցառումներին:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Անի Պապիկյան

Ռաֆայել Դավթյան

06.12.2022թ.